

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1 Ո՞ր դեպքում է կիրառվում գծիկային գիծը.

- 1) առանցքային գծեր պատկերելիս
- 2) չափագծերը պատկերելիս
- 3) տեսանելի ուրվագծեր պատկերելիս
- 4) անտեսանելի ուրվագծեր պատկերելիս

2 Արտաքեր գծերը և չափագծերը գծվում են.

- 1) հիմնական հոծ գծով
- 2) գծակետային գծով
- 3) բարակ հոծ գծով
- 4) գծիկային գծով

3 Չափաթիվը գրվում է ձախ կողմից, եթե.

- 1) չափագիծը դասավորված է ուղղաձիգ
- 2) չափագիծը դասավորված է պրոֆիլային հարթությունում
- 3) չափագիծը դասավորված է ֆրոնտալ հարթությունում
- 4) չափագիծը դասավորված է հորիզոնական

4 Շառավղի չափաթվի առջև դրվում է.

- 1) M տառը
- 2) R տառը
- 3) D տառը
- 4) K տառը

5 Մեծացման մասշտաբ է.

- 1) 1 : 3
- 2) 3 : 1
- 3) 2.5 : 1
- 4) 1 : 2.5

6 Գծագրական թղթի եզրերից ի՞նչ հեռավորության վրա է գծվում շրջանակը.

- 1) ձախից-20մմ, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ
- 2) ձախից-25մմ, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ
- 3) ձախից, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ
- 4) ձախից, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ

7

Առարկայի մտովի բաժանումն առանձին մասերի անվանում են.

- 1) էսքիզ
- 2) երկրաչափական ձևի վերլուծություն
- 3) փռվածք
- 4) երկրաչափական պատկերի կառուցում

8

Չուգահեռ պրոյեկտման դեպքում բոլոր պրոյեկցիաները ստացվում են.

- 1) 90° թեքությամբ
- 2) 45° թեքությամբ
- 3) բնական մեծությամբ
- 4) բնականից մեծ

9

Կտրվածք է կոչվում այն պատկերը, որը.

- 1) ստացվում է կենտրոնական պրոյեկտումից
- 2) ստացվում է զուգահեռ պրոյեկտումից
- 3) պարզաբանում է առարկայի ներքին հատույթները
- 4) պարզաբանում է առարկայի ներքին ձևը

10

Կտրվածքներում գծապատումը կատարվում է.

- 1) 60° անկյան տակ
- 2) 90° անկյան տակ
- 3) 30° անկյան տակ
- 4) 45° անկյան տակ

11

Ինչպե՞ս է անցնում կտրող հարթությունը՝ հատակագիծը շինարարական գծագրի վրա ցուցադրելու համար.

- 1) առաջին հարկի հատակի մակարդակով
- 2) առաստաղից անմիջապես ներքև
- 3) պատուհանագոգերի մակարդակից մի փոքր վերև
- 4) պատուհանագոգի մակարդակով

12

Ծառի ո՞ր տեսակը սաղարթավոր չէ.

- 1) հաճարենի
- 2) հացենի
- 3) կաղնի
- 4) մայրի

13 Օտոի բնի հիմնական հատույթները լինում են.

- 1) շառավղային, եզրային
- 2) լայնական, շառավղային, տանգենցիալ
- 3) շառավղային, տանգենցիալ
- 4) լայնական, շառավղային, եզրային

14 Սդրոցանյութի ո՞ր տեսակին են անվանում չորսվակ.

- 1) որը ստացվում է գերանը երկայնական ուղղությամբ չորս հավասար մասերի բաժանելով
- 2) որի լայնությունը երկու և ավելի անգամ մեծ է հաստությունից
- 3) որի լայնությունը և հաստությունը մեծ են 100 մմ-ից
- 4) որի հաստությունը փոքր է 100 մմ-ից, իսկ լայնությունը չի գերազանցում հաստության կրկնապատիկը

15 Գործողություն, որի ժամանակ փայտե դետալներին տալիս են համապատասխան ձև, ճշգրիտ չափեր և անհրաժեշտ մաքրություն.

- 1) շաղափում
- 2) խարտոցում
- 3) ռանդում
- 4) սղոցում

16 Մշակված մակերևույթի որակը համարվում է բավարար, եթե.

- 1) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի ճակատին
- 2) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և եզրերով, առանց բացակների կիպ հպվում է մշակված մակերևույթին
- 3) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի եզրին
- 4) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և անկյունագծերով, առանց բացակների կիպ հպվում է մշակված մակերևույթին

17 Ի՞նչ է շպոնը.

- 1) փայտի բարակ շերտ, որը ստացվում է ռանդման կամ ծլեպման միջոցով
- 2) փայտի բարակ շերտ, որը ստացվում է սղոցման կամ թործման միջոցով
- 3) սալիկներ, որոնք ստացվել են շոգեխաշած և մանրացված փայտի ամենափոքր մանրաթելերի մամլման միջոցով
- 4) սալիկներ, որոնք ստացվել են թեփի, տաշեղների և փայտի փոշուց

18

Ի՞նչ գործիք են օգտագործում նախապատրաստվածքի վրա չափանշման գուգահեռ գծեր քաշելու համար.

- 1) կարկին
- 2) խազքաշ
- 3) անկյունարդ
- 4) անկյունաքանոն

19

Ինչպիսի՞ ձևի ատամներով սղոց են օգտագործում փայտանյութի երկայնական կտրման համար.

- 1) փոքր թեքությամբ
- 2) կոբ
- 3) ուղիղ
- 4) մեծ թեքությամբ

20

Ի՞նչ է չափրաստումը.

- 1) սղոցի ատամների ուղղումն է
- 2) սղոցի ատամների գագաթների հավասարեցումն է ուղիղ գծով
- 3) սղոցի ատամների սրումն է
- 4) սղոցի ատամների թեքումն է հերթականությամբ տարբեր կողմեր

21

Ինչպե՞ս են անվանում փայտի վերջնամշակման համար նախատեսված թործիչ գործիքը.

- 1) իզմիր
- 2) նրբառանդա
- 3) ռանդա
- 4) ֆուգան

22

Ի՞նչ է նշվում տեխնոլոգիական քարտում.

- 1) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, չափանշման եղանակները
- 2) փայտանյութի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 3) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 4) արտադրանքի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները

23

Ինչպե՞ս է կոչվում փայտը 45° և 90° անկյան տակ սղոցելու հարմարանքը.

- 1) ռեյսմուս
- 2) անկյունասաղոցման արկղ
- 3) հենակ
- 4) անկյունասաղոցման ուղղորդ

24

Նախապատրաստվածքի ավելցուկային շերտը, որը կտրող գործիքով պետք է հեռացվի հետագա մշակման ընթացքում, անվանում են.

- 1) բազային շերտ
- 2) մշակվող շերտ
- 3) ելուստ
- 4) թողվածք

25

Տախտակի երկայնական լայն մակերևույթն անվանում են.

- 1) ճակատ
- 2) կող
- 3) եզրաշերտ
- 4) եզր

26

Մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերի ուղղությամբ պետք է լինի ոչ պակաս.

- 1) 4d
- 2) 10d
- 3) 15d
- 4) 5d

27

Ինչո՞վ են պատում տանիքի թիթեղները կոռոզիայից պաշտպանելու համար.

- 1) արույրով և ցինկով
- 2) անագով և ցինկով
- 3) պղնձով
- 4) երկաթով

28

Ի՞նչ հաստոցների միջոցով են ստանում տեսակավոր գլանվածքը.

- 1) դրոշմման
- 2) ձուլման
- 3) կոման
- 4) գլոցման

29

Ի՞նչ է չափանշումը.

- 1) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի և մշակման ենթակա տեղամասերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը
- 2) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի արտատպման գործողությունը
- 3) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի անցկացման գործողությունը
- 4) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի մշակման ենթակա եզրագծերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը

30

Ի՞նչ մետաղների համաձուլվածք է արույրը.

- 1) պղնձի և ցինկի
- 2) պղնձի և կապարի
- 3) պղնձի և անագի
- 4) պղնձի և բրոնզի

31

Թուջ կոչվում է այն համաձուլվածքը, որում ածխածնի պարունակությունը հավասար է.

- 1) 2,12 % -ից մինչև 6,67%
- 2) 1,12 % -ից մինչև 5,67%
- 3) 2,14 % -ից մինչև 6,67%
- 4) 1,14 % -ից մինչև 5,67%

32

Պողպատների ջերմամշակման հիմնական տեսակներն են.

- 1) թրծաթողումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը
- 2) թրծումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը
- 3) թրծումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը
- 4) թրծաթողումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը

33

Մեկ դյույմը հավասար է.

- 1) 21,4 մմ
- 2) 25,4 մմ
- 3) 20,5 մմ
- 4) 24,5 մմ

34

Փականագործական մետաղապողոցի սոցաժապավենը շրջանակի մեջ տեղադրում են ատամներն ուղղված դեպի.

- 1) բույթերը
- 2) բռնակը
- 3) անշարժ գլխիկի ուղղությամբ
- 4) բռնակի հակառակ ուղղությամբ

35

Հատիչի սրման անկյունը պողպատներ հատելիս հավասար է.

- 1) 60°
- 2) $45^\circ-60^\circ$
- 3) 90°
- 4) $35^\circ-40^\circ$

36

Հատման ժամանակ տարբերում են մուրճով հարվածի հետևյալ տեսակները.

- 1) դաստակային, արմունկային և ազդրային
- 2) արմունկային և ազդրային
- 3) դաստակային, արմունկային և ուսային
- 4) արմունկային և ուսային

37

Խարտոցներն ըստ աշխատամասի 10 մմ երկարության վրա եղած ծրատվածքների թվի լինում են.

- 1) կոպտատաշ, մաքրատաշ, կետային
- 2) կոպտատաշ, մաքրատաշ, թավշյա
- 3) կոպտատաշ, մաքրատաշ, խաչաձև
- 4) կետային, մաքրատաշ, թավշյա

38

Ի՞նչ կտրիչից են օգտվում խառատային հաստոցով աստիճանավոր լիսեռներ մշակելիս.

- 1) անցահատ ուղիղ
- 2) ենթահատ
- 3) կտորահատ
- 4) անցահատ հենակային

39

Նախապատրաստվածքի մեկ պտույտի ընթացքում կտրիչի տեղափոխման մեծությանն անվանում են.

- 1) կտրման խորություն
- 2) մատուցում
- 3) կտրման արագություն
- 4) հաճախություն

40

Մետրական պարուրակների եռանկյուն պրոֆիլի գագաթի φ անկյունը հավասար է.

- 1) 45°
- 2) 55°
- 3) 60°
- 4) 90°

41

Ֆրեզերման ժամանակ մատուցում ասելով հասկանում են.

- 1) կտրման արագությունը
- 2) մշակվող նախապատրաստվածքի տեղաշարժը պտտվող ֆրեզի նկատմամբ
- 3) ֆրեզի պտտման հաճախականությունը
- 4) կտրման խորությունը

42

Ինչպե՞ս են անվանում այն սարքավորումը, որը փոխակերպում է էներգիան, նյութերը կամ տեղեկատվությունը.

- 1) դետալ
- 2) աշխատանքի գործիք
- 3) մեխանիզմ
- 4) մեքենա

43

Ըստ գործողության բնույթի մեքենաները լինում են.

- 1) էներգախնայող
- 2) դինամիկ
- 3) էներգետիկական
- 4) ստատիկ

44

Ո՞ր մեքենան աշխատանքային չէ.

- 1) փոխադրիչ
- 2) տեխնոլոգիական
- 3) տրանսպորտային
- 4) էլեկտրաշարժիչ

45

Էլեկտրական լարումը չափում են.

- 1) օհմմետրով
- 2) վոլտմետրով
- 3) ամպերմետրով
- 4) վատտմետրով

46

Վոլտմետրը էլեկտրական շղթային միացվում է.

- 1) գուգահեռ
- 2) ամպերմետրից հետո
- 3) հաջորդաբար
- 4) ամպերմետրից առաջ

47

Արմատապտղավոր բույսեր են.

- 1) դդմիկ
- 2) տաքդեղ
- 3) գինձ
- 4) ճակնդեղ

48

Հացահատիկային բույս չէ.

- 1) բրինձ
- 2) սոյա
- 3) աշորա
- 4) եգիպտացորեն

49

Մսամթերքի ջերմային մշակումը ո՞ր գործընթացի հիմնական մասն է.

- 1) տեխնիկական
- 2) քիմիական
- 3) տեխնոլոգիական
- 4) ֆիզիկական

50

Բանջարեղենի հիմնական խմբից չէ.

- 1) պտղաբանջարներ
- 2) արմատաունդավոր
- 3) արմատապտղավոր
- 4) սոխուկավորներ

51

Տերևաբանջարների թվին է պատկանում.

- 1) ստեպղին
- 2) սեզատերև
- 3) նեխուր
- 4) անխոն

52 Ո՞ր վիտամինը չի համարվում ճարպալույծ.

- 1) C
- 2) K
- 3) A
- 4) D

53 Ո՞ր վիտամիններն են ամրացնում ոսկորները և լավացնում ինքնազգացողությունը.

- 1) B
- 2) D
- 3) A
- 4) E

54 Վիտամին A պարունակող սննդամթերք չէ.

- 1) կիվի
- 2) թուրինջ
- 3) ձու
- 4) կարագ

55 Շոգեեփն ի՞նչի միջոցով է պատրաստում ուտեստը.

- 1) միկրոալիքների
- 2) ջրային բաղնիքի
- 3) տապակման
- 4) ծխահարման

56 Ի՞նչ է կարվինգը.

- 1) հարմարադրում
- 2) հարմարադասում
- 3) դեկորատիվ ներկում
- 4) ձևավորման արվեստ

57 Պարզ ուսագծային կարվածքի գծագրի կառուցման համար անհրաժեշտ չափս է.

- 1) ներքին կարի երկարությունը
- 2) սեղմոնի լայնությունը
- 3) մեջքի երկարությունը մինչև գոտկատեղ
- 4) սեղմոնների երկարությունը

58 Մեջքի երկարության չափը մինչև գոտկատեղ վերցնում են.

- 1) հինգերորդ ողից մինչև գոտկատեղ
- 2) յոթերորդ ողից մինչև գոտկատեղ
- 3) ութերորդ ողից մինչև գոտկատեղ
- 4) վեցերորդ ողից մինչև գոտկատեղ

59 Ձեռքի շարժաբերով կարի մեքենայի մաս չէ.

- 1) փոկ
- 2) սևեռիչ
- 3) թափանիվ
- 4) սեղմման թաթիկ

60 Հագուստի գոտկային տեսակ չէ.

- 1) անդրավարտիք
- 2) շրջագգեստ
- 3) տաբատ
- 4) կիսաշրջագգեստ

61 Բնական մանրաթելի տեսակ չէ.

- 1) ացետատային
- 2) հանքային
- 3) բուսական
- 4) կենդանական

62 Ըստ պատրաստման հումքի գործվածքները լինում են.

- 1) արհեստագործական և կենդանական
- 2) ֆիզիկական և բուսական
- 3) բնական և քիմիական
- 4) քիմիական և տեխնոլոգիական

63 Ասեղնագործության հիմնական գործիքներից է.

- 1) քարկիթ
- 2) կտուտիչ
- 3) քարգահ
- 4) թակ

64

Ասեղնագործության մեջ օգտագործվող կարատեսակներից չէ.

- 1) եղնակար
- 2) շուլակար
- 3) թելքաշ
- 4) ճյուղակար

65

Կարպետն ի՞նչով է տարբերվում գորգից.

- 1) գեղագարդումով
- 2) թելախավով
- 3) զարդանախշերով
- 4) զարդաձևերով

66

Կտուտիչը նախատեսված է.

- 1) խավը սանրելու համար
- 2) թելը հանգուցելու և կտրելու համար
- 3) խավը խուզելու և հավասարեցնելու համար
- 4) գործվածքի շարքերը նստեցնելու համար

67

Հայկական գորգի առանձնահատկություններից է.

- 1) մեկ հանգույցը
- 2) կես հանգույցը
- 3) կրկնակի հանգույցը
- 4) մեկուկես հանգույցը

68

Բրդե մանրաթելերի 96%-ը ստանում են.

- 1) ուղտի բրդից
- 2) այծի բրդից
- 3) ոչխարի բրդից
- 4) լամայի բրդից

69

Ըստ կառուցվածքի հագուստները լինում են.

- 1) ուսային և գոտկային
- 2) գոտկային և կոնքային
- 3) ուսային և թևքային
- 4) ուսագծային և կոնքային

70

Ի՞նչ է իրենից ներկայացնում հագուստի պատրաստման ժամանակ կիրառվող ձևանր.

- 1) փոքրացված չափերով գծագիր
- 2) բնական չափերով գծագիր
- 3) մեծացված չափերով գծագիր
- 4) տեխնիկական գծագիր

71

Մասնագիտության ընտրության բանաձևերից ո՞րն է ճիշտ.

- 1) պահանջված է, պետք է, ուզում եմ
- 2) ուզում եմ, կարող եմ, հնարավոր է
- 3) պահանջված է, պետք է, կարող եմ
- 4) ուզում եմ, կարող եմ, պետք է

72

Մասնագիտությունների դասակարգման ո՞ր խմբի ներկայացուցիչները գործ ունեն աշխատանքի անշունչ առարկաների, տեխնիկական միջոցների ստեղծման, մոնտաժի, հավաքման և կարգաբերման հետ.

- 1) մարդ-տեխնիկա
- 2) մարդ-մարդ
- 3) մարդ-նշանային համակարգ
- 4) մարդ-կենդանի բնություն

73

Նախագծի կատարման ո՞ր փուլում է տրվում տնտեսագիտական և էկոլոգիական գնահատական.

- 1) տեխնոլոգիական
- 2) վերլուծական
- 3) կոնստրուկտորական
- 4) որոնողական

74

Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը.

- 1) հասարակության պահանջարկի ձևավորման մեխանիզմները
- 2) հասարակության առաջարկի ձևավորման մեխանիզմները
- 3) հասարակության գնողունակության բարձրացման օրինաչափությունները
- 4) հասարակության տնտեսական կյանքի զարգացման օրինաչափությունները

75

Անձի նյութական կամ հոգևոր պահանջները բավարարելու անհրաժեշտությանն անվանում են.

- 1) բյուջե
- 2) շահույթ
- 3) եկամուտ
- 4) կարիք

76

Ի՞նչ է եկամուտը.

- 1) անձի կարիքների բավարարման համար նյութական միջոցների ձեռքբերումը
- 2) փող կամ նյութական արժեքներ, որոնք կարող են լինել աշխատավարձի, պարգևատրման կամ նվերի տեսքով՝ կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց
- 3) փող կամ նյութական արժեքներ, որոնք ապահովում են ապրանքների ձեռքբերումը
- 4) ընտանիքի կարիքների բավարարման համար նախատեսված ֆինանսական միջոցներ

77

Ո՞ր դեպքում է ընտանեկան բյուջեն հավասարակշռված.

- 1) երբ ծախսերը գերազանցում են եկամուտներին
- 2) երբ եկամուտները չեն գերազանցում ծախսերին
- 3) երբ եկամուտներն ու ծախսերը հավասար են
- 4) երբ եկամուտները գերազանցում են ծախսերին

78

Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը.

- 1) պետական բյուջեի համալրումը հարկային եկամուտներով
- 2) նոր մտահղացումների որոնումը
- 3) ապրանքների և ծառայությունների վաճառքն է որոշակի գնով, որն ապահովում է շահույթի համակարգված ստացում
- 4) ապրանքների և ծառայությունների ոլորտում բնակչության կարիքների բավարարումը

79

Տնտեսվարող սուբյեկտներ կարող են հանդիսանալ միայն.

- 1) իրավաբանական անձինք
- 2) անհատները
- 3) ֆիզիկական անձինք
- 4) ֆիզիկական և իրավաբանական անձինք

Ձեռնարկատիրական գործունեության կարևորագույն հատկանիշներն են.

- 1) անկախություն, նորարարության վրա հույս դնելը
- 2) նոր գաղափարների մշտական որոնում
- 3) նոր գաղափարների մշտական որոնում, ռիսկ, տնտեսական կախվածություն երկրի մակրոտնտեսական իրավիճակից
- 4) ռիսկ և անորոշություն, անկախություն և գործունեության ազատություն, հույս նորարարության վրա